


ձեան օտար ղեզ մը կը տեսնէ . կը փութայ , հոն դաւադանով այն ձեան ղեզը կը յուզէ . ա յանկարծ զարուրած ձեռքովը զլիսուն կը զարնէ , ոտը մ'էր որ կը տեսնէր : Շտապաւ ձիւնը կը բանայ , և ահա մայրը որ իւր դստեր հետ ընդգրկեալ՝ կարծես քաղցրութեամբ խօսակցութեամբ կը ննջեն : Ճուրան անոնց անդամները պաղեցուցեր անշարժ ըրեր էր , և այլ սրտերին չէր բարախեր : Կեանքը գնացեր էր իրենցմէն :

Երբուն աչքէն արտասուք մը կ'իջնէ , և այն պաղած մարմինները վերցնելով՝ տունը կը տանի , ուստի գերեզմանը պիտոր յուղարկուէին :

Երբ աւուրք անցնելով օդուն խտութիւնը մեղմացաւ և ձիւներն անհետացան , նոճին իսկ՝ որ իբր մահուն բարձ ծառայեր էր , իւր մոկէ զոյնն զուարթացնելով՝ կանաչագոյն հանգերէն մը զարդարեցաւ . ծերը որ ըստ ս-

լորութեան միշտ վերէն գործին կ'իջնէր , ի յիշատակ այն դժբաղդ զիպաց՝ այն նոճին մօտ վարդենւոյ տունկ մը տնկեց , քոֆն ալ աղքատին խաչափայտ մը կանգնեց : Վերէն վար օահած ջրի երակ մը այն վարդենին միշտ արբուցանելով՝ ուռնացաւ , մեծցաւ , զեղեցկացաւ , ծաղկեցաւ : Ի՛նչպէս ճօն ու բարգաւաճ ու զուարթ էր այն տնկոց թափուհին , կարծես դիտմամբ այն աղքատին մահու անկողինը՝ փառաւորել կ'ուզէր , այն մահու անկողինը՝ որ երկրիս վրայ անուն մը չունի :

Ուստի ըսուեցաւ Դժբաղդ մօր վարդենին , յանուն անմեղ դստեր . անցաւորք որ այն ցառոց պատմութիւնը գիտէին , յարգութեամբ քովէն կ'անցնէին առանց անոր փնտ մը ընելու . և ցորչափ ծերն ապրեցաւ , ոչ իւր խնամքը այն վարդենին պակաս ըրաւ , և ոչ աղքատին խաչին վրայէն ծաղկանց պսակը նուազեցուց :



ՇԱՀԻՆԵԱՆ Ի ՊԱՐԻՍ

Այս տարուան Journal des Artistesի մէջ (թ. 9) կը կարդանք ուրախութեամբ Académie Julianի աշակերտած Հայ երիտասարդի մը անունը , որ շահեր է 100 փրանկ , միտալ և ուրիշ մրցանակներ : Ինքն է՝ Պ . Երկար Շահինեան — Նախկին աշակերտ Գառըգիւղի Մխիթարեան վարժարանին — որ , նկարչութեան սիրով վառուած , արտաքույ կարգի , զինքը կրծելու , մաշեցնելու չափ , թողուց Կ . Պոլիսը , ուր արդէն նոյն արուեստին մէջ իրեն առաջին վրձինի խաղերուն ուղեցոյցը եղած էր Պ . Մէլզոն Տիրացուն , ծանօթ պատկերահանը : Անցաւ Վենետիկ , հոն նախ զարգացաւ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանին մէջ . յետոյ , գտաւ նոյն քաղաքին մէջ իրեն խնամածու Հայր մը , առաջնորդ մը այն Բարերարաց Ուսումնարանին վարպետը , Փաւլէթթի , նշանաւոր պատկերահանը : Պոսր ձեռքին տակ աշխատեցաւ , յառաջեց Պ . Շահինեան , և արդիւնքէն ունեցաւ այն խրախոյսը , համոզումը և խոսելոյ որ ինքը , օր մը , այն դժուար արուեստէն

յաղթական պիտի ելլէ , և վարպետին խորհրդովը մեկնեցաւ ի Պարիս մօրը Հետ : Ընտրեց հոն նկարչութեան վարժողներէն Académie Julianը , կրկնապատկեց ճիշդ , և ստացաւ իրեն աշխատութեանը առաջին ժողովորդ . որուն մասնակցելով , կը մաղթենք տեսնելու զինքը արժանի աշուճներուն փառքին :

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ

Ելեկտրական լուսով ձկնորսութիւնը զոր գտաւ Հանձարեղն Ետիսըն , կատարելապէս ի գործ կը գրուէ Ամերիկայի մէջ :

Լուսակիչ կանթեղներ ամբափակեալ ապակեայ գունտի մը մէջ , և միացած հաղորդիչ թւլեքու Հետ , որոնք ըստ ամենայնի առանձնաշեղ են վառ հաղորդիչ նեւթեղով , կ'ընկզմունեն